

- եւ ազարակս եւ այլ եկամուտ. եւ են պերճ
եւ փառաւոր, անձնիշխան եւ ինքնակալ: Եւ
ամէն հինգչարթի տիւան կ'երթան մօտ
Փափն. անտ է տեսանել զբազմութիւն կառաց
- 245 եւ ձիոց. կառքն ոսկրաւծ եւ մեծածախ, վեց
վեց ձիօք Սան Փեթրօյին մօյտանն կուտեալ:
Մին կառքն հազար զուռուշ. վրայի ծած-
կոյթն սքէուլէթ չուխայ: Ծինեն եկեղեցիս եւ
վանորայս, սրիզալ եւ դպրատունս. եւ ի
- 250 ազմուկ տեղիս կամարակապ բազմածախ վի-
մաչէն յոլովակնեան կամուրջս. եւ յերկիւ-
ղալի տեղիս՝ իջեւանս եւ պանտոկս: Ունին եւ
այլ ծածուկ վարձք. են որ ամէն շարաթ օր
կերակուր կ'ուղարկեն ի բանտն, հաց եւ
- 255 գինի. տմանք յԱւագ հինգչարթին կ'երթան ի
մեծ զընտանն. երկու, իրեք պարտաւորս ա-
զատեն վճարելով զպարտս նոցա: Եւ են որ
թային արեւ են քանի հոգոյ կերակուր: Եւ
սոքա եւս ամէն տարի ըստ կարողութեան ա-
- 260 մէն մէկ հինգ, վեց որք կու կարգէ եւ սէր-
միշա, ճիհէզ կու տայ: Եւ յորժամ Փափն մեծ
մարդու ողորմութիւն տայ, նոքա այլ պիտոր
տան: Եւ այլ բազում ծածուկ վարձք ունին,
որ միայն ծածկազէտն գիտէ. զի ազգն այն
- 265 յոյժ ծածուկ սիրէ ողորմութիւն առնել եւ
առաքինութիւն:

Քարտինալքն եւս ունին իւրեանց ներքեւ
երկու, իրեք պօնսինսօք, որք են քորեպիսկո-
պոսք, որ սոցա հրամանաւ շրջին եւ ձեռնա-